

Հայ գրականության մարզային օլիմպիադա

2019-2020 ուստարի

(տևողությունը՝ 120 րոպե)

11-րդ դասարան

1. Ո՞ր հեղինակի ո՞ր հերոսին են բնութագրում հետևյալ տողերը. «Նրա վարմունքը սկզբում ինձ բավական անախորժ էր թվում, բայց հետո մի գիծ զգացի նրա մեջ, որը կարծես թե գրավեց ինձ. այդ գիծը թերևս այն էր, որ նա ցինիկի պես անկեղծ էր, լրբի պես համարձակ և երեխայի պես անփույթ»: Բնութագրի՛ր այդ հերոսին. այսօր կա՞ն այդպիսի հերոսներ: Հիմնավորի՛ր:

5 միավոր

2. Ու՞մ է բնութագրում հետևյալ շրջասույթը. «Նորավեպի իշխան»: Ինչո՞ւ արժանացավ այդ պատվանունին: Ըստ այդ հեղինակի՝ ո՞րն էր ճիշտ ապրելու գաղտնիքը (նշի՛ր համապատասխան նորավեպը), ինչպե՞ս պետք է մեռնել. ինչի՞ հետ է համեմատում կնոջը այդ գրողը:

5 միավոր

3. Ո՞ր հեղինակին են նվիրված հետևյալ տողերը և ովքե՞ր են հեղինակները:

Շարունակի՛ր՝

Նա մեծ էր հողով, արյունով.....

Մեր թռիչքը.....

Վերլուծի՛ր այդ հեղինակի՝ քո նախընտրած որևէ գործ:

5 միավոր

4. Գրել Ավետիք Իսահակյանին բնութագրող շրջասույթ: Վերլուծել «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը՝ նշելով գրելու շարժառիթը և տարբերիվը: Բացահայտի՛ր քո Իսահակյանին՝ ներկայացնելով քո սիրած ստեղծագործությունը:

5 միավոր

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի

Նախագահ՝

Ս.Աբազյան